Ջրառատ

Ջրառատ բնակավայրի վարչական տարածքը կազմում է 5622,18 հա, բնակչությունը 1043 մարդ: Գտնվում է Փամբակի լեռնաշղթայի Հարսնաքար 2483մ լեռնաճյուղի արևմտյան լանջին, Ջրառատ գետի վերին հոսանքի ավազանում, ծովի մակերևույթից 1900մ բարձրության, Ախուրյանից 16 կմ, Գյումրի քաղաքից 20 կմ մայրաքաղաքից, 135 կմ հեռավորություն վրա է: Բնակավայրում գործում է Ջրառատի միջնակարգ դպրոցը, կառուցման ավարտական փուլում է մանկապարտեզի շենքը: Բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է: Գյուղում պահպանվել է 6-րդ դարում կառուցված, դրսից ուղղանկյուն գմբեթատակ ունեցող եռախորան սբ.Մինաս եկեղեցու ավերակներ: